

զգացումն եւ հանճար իմաստից եւ կրօնից տեսանի եւ ՚ի նախնիս նորին Լեւոնական իշխանս եւ նուաճողս բարձանց Կիլիկիոյ. առաջին պայազատն Կոստանդին մարկիսն՝ շինէ կամ նորոգէ զԿաստաղօն վանս. որդի նորա մեծ սեբաստոսն Թորոս Ա, զԴրագարկ եւ զՄաշկեւոր. եղբորորդի իւր համանուն Թորոս Բ, կրկին կանգնող պետութեանն՝ վկայի ոչ միայն բանասէր, այլ եւ լուծիչ մթին բանից եւ մարգարեական իմն ունել տեսութիւն (չափազանցօրէն)։- Այլ առաւել եւս փայլէ ուսումնասիրութեան եւ գրասիրութեան շնորհ՝ ՚ի զարմի անդ Հեթմեանց յաջորդաց Ռուբինեանց. յորոց գրեաթէ յամենայն պայազատաց՝ ժամանեալ մնան ցարդ ոմանց իսկական երկք, եւ յոլովից՝ վասն ինքեանց կամ վասն օտարաց գրել եւ յօրինել տուեալ մատեանք. զոմանս յայնցանէ արդէն յիշեալ է մեր ՚ի ծանօթ մեզ եղելոցն, որ յայտ է թէ սակաւք ՚ի բազմացն իցեն. որպէս, Վարք Ոսկիբերանի գրեալ վասն Օշնի հօր Ս. Լամբրունեցոյն. իսկ սա՝ որպէս բազում անգամ կրկնեցաւ՝ պարագլուխ ամենայն բանասիրաց տանս Կիլիկիոյ՝ իւրով ձեռօք գրեալ է յոլով մատեանս, յոլովագոյնս եւս տուեալ գրել։- Ոչ անարժան նմին եւ եղբայրն Հեթում-Հեղի,

եւս գրել զ

Սկեւոյ։- Նմանեալ նմին յետ դարու միոյ եւ դուստր թոռին իւրոյ համանուան՝ Ալիծ՝ կին սենեսկալին Կիպրոսի, տայր գրել աւետարանս եւ կտակարանս ձեռամբ ճարտարին Ստեփանոսի Գոյն-Երիցանց, որք ցարդ պահին առ գաղթականս Հայոց յարեւմուտս։- Մեծագոյն եւս տեսանի գրասիրութիւն եւ գրավարժութիւն յարքունական շառաւելի Հեթմեանց բնոյն, որոց նոր նահապետ Կոստանդին Պայլ՝ նորոգեաց կամ յառաջացոյց զամենայն երախտիս Լեւոնի, ընդ քաղաքականին եւ զբանասիրականն, յորս որդիք նորա պանծալիք մի քան զմի գերազանցեցին. առաջինն՝ քաջն Սմբատ Գունդստապլ՝ արժանաւորն մատենագրաց դասակցութեան, եթող մեզ եւ զիւրոց մատանց գիծս, եւ մատեանս գրեալս իւրովք ծախուք։ Նոյնպէս եւ երկրորդն, որ է Բարսեղ արքեպիսկոպոս, որ եւ հեղինակ է Քերական գրոց։ Ծանօթ եւս են կրսերոյն Յովհաննու եպիսկոպոսի՝ առաւել քան զմտաւոր վաստակս, բազում մատեանքն ընդօրինակեալք, եւս եւ իւրով իրախուսանօք յօրինեալք, որպէս Գործոց Առաքելոց Մեկնութիւնն Սկեւոացոյն։ Չորրորդ եւ սակաւածանօթ եղբոր սոցա՝ Վասակայ կամ Վապի տեառն Ճանճոյ, քաջի եւ բարեպաշտի՝ յիշին ընդ այլոց սրբազան սպասուց եւ աւետարանք գրեալք, եւ Սաղմոս մի ատենի։ Իսկ վեհագունի հարազատացն՝ Հեթում արքայի, վկայեալ է զոյգ ընդ քաղաքական եւ պատերազմական հրահանգաց՝ եւ սէր մտաւորականին.

« **ԽԱՂՈՒՄ** Եւ մատեանս, յորոց բազումք կան մինչեւ ցայսօր (ասէ